ՆՈՐ-ԴԱՐ

№ 218 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ_ապաթ 24 Դեկտեմբերի 1888 Հ_ապաթ 24 Դեկտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 218

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., Հատը՝ 5 կոպեկ։
Դաժանորդագրվում են Թիֆլիսում՝ մխիթարեան հրատարակութիւնը։

Խմբագրութիւնն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Дары» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Թերթը լոյս է տալիս օր ըստ օրէ (բացի սուրբերից) ժամը 9-ից յետոյ։
2-րդ հայատառ հրատարակութիւնները ընդունւում են միայն յետադարձ հայտարարութիւնների համար 2 կ., սեփականների համար կիսագնով։

ՀԱՍՍԱ ASSE

ՀԱՅԿԱԿԱՆ-ՓՐԱՆՍԵՆԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն չէրտով և ծրագրով

Խմբագրութիւնը կ'ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում Ս. Ներ-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Տարափոխիկ հիւանդութիւնները։
Կոմս Լօրու-Մելիքեան։
Քրոնիկոն.—Լուրեր։
Գաղափարական. — Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Բանասիրական. — Քրիստոսի գիշերը։
Յայտարարութիւններ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԳԻՇԵՐԸ

(Ազանդութիւն)

Սալտիկովից

—

Դաշտավայրը դեռ ևս կարկամում է, բայց գիշերուայ խորին լռութեան մէջ ձիւնի կեղեւի տակ արդէն լսւում է զարթնող վտակների ձայնը։ Խրամներում և խոռոչներում այդ ձայնը կերպարանափոխւում է խուլ բոմբիւնի և զգուշացնում է Ճանապարհորդին, որ այդտեղ Ճանապարհը փոքուած է ջրերով. իսկ եղեամով ձրնջուած անտառը, ինչպէս առասպելական հերոսը երկաթեայ գլխարկով, լռում է։ Մուխի երկինքը ամբողջապէս ծածկուած է աստղերով, որոնք Թափում են իրենց սառը և դողդոջուն լոյսը երկրի վրայ. նրա խաթուսիկ առկայծման մէջ աղօտ կերպով երևում են ձիւնում Թաղուած ծառերի սև կէտերն։ Ողբութեան, անհոգութեան և խեղճութեան լինիքը ընկել է և սառած դաշտավայրի վրայ և լուռ ուղու վրայ։ Բոլորը կաշկանդուած, անօգնական և լուռ է, կարծես ձնշուած է աներևոյթ, բայց սոսկալի ստրկութեամբ։

Բայց ահա դաշտավայրի մի ծայրում Թնդաց կէս գիշերային զանգակի զոգանջիւնը, նրա ձայնին, հակառակ ծայրից սլացան միւսը, չետոյ երրորդը, չորրորդը։ Գիշերուայ մԹութեան մէջ երևացին եկեղեցիների վառուող գագաթները և յանկարծ ջրհեղեղը կենդանացաւ։ Ճանապարհով ձգուեցին գիւղացիների խմբերը։ Առաջից գնում էին կեանքից և աշխատութիւնից տանջուած, սրտներն մաշուած, գլուխները ցածր կախ ձգած տղէտ մարդիկը. նրանք տատանուն էին տանում իրենց խոնարհութիւնը և իրենց հառաչանքները. այդ էր բոլորն՝ ինչ որ կարող էին տալ նրանք չարութիւն առած Աստուծուն։ Մի փոքր հեռու նրանց հետևում էին, տանի չորերով զարդարուած, գիւղի հարուստները, վաշխառուները և այլ իշխանները։ Նրանք մխիթարից հետ ուրախ հանաքներ էին անում և տանուն էին տանում առաջնիայ չարաՀռութեան գուարճութեանց մասին ցընորքներ։ Բայց շուտով ժողովրդի խմբերը ուղիի խորքում ծածկուեցան. կոչման զանգահարութեան վերջին հարուածը տատու օդում և նորից բոլորը հանդիսաւոր կերպով լռեց։

Խորին խորհուրդ զգացուեց այդ ընկըսուած չարժումնքի յանկարծակի դադարման մէջ, կարծես այդ լռութեան ետևից առաջ էր չարժւում մի հրաշք։ Աւդարև, դեռ արևելքը չէր կարմրել, երբ կատարուեց ցանկալի հրաշքը։ Ցարութիւն առաւ նախատած և խաչած Աստուած. Ցարեաւ այն Աստուածը՝ առ որն ի սկզբանէ վշտացեալ և տկար սրտերը աղաղակում են՝ «Տէր, չտապիր»։

Ցարեաւ Աստուած և իւր հոգով լցրեց ամբողջ աշխարհը։ Լայն անապատը չարժուեց դէպի նա իւր բոլոր ձիւներով և քամիներով։ Անապատի ետևից ձգուեց հզօր անտառը և զգացց Տիրոջ մօտենալը։ Բարձր եղևնիները բարձրացրին իրենց Թաւուտ Թաւիրը, հարիւրամեայ մայրիները ձռճռացրին իրենց գագաթները, զգոյացին խրամները և գետերը, դուրս վազեցին գազանները իրենց խորքերից և որջերից, դուրս Թռան Թռչունները բներից. բոլորը զգացին, որ խորքից գալիս է ինչ-որ լուսաւոր, ուժեղ բան, որից բղխում է լոյս և ջերմութիւն և բոլորը աղաղակեցին. «Տէր, Դու ես արդեօք»։

Տէրը օրհնեց երկիրը և ջուրը, գազաններին և Թռչուններին, և ասաց.

«Խաղաղութիւն ձեզ։ Ես բերել եմ ձեզ համար գարուն, ջերմութիւն և լոյս։ Ես կը բացեմ գետերը սառցային ծածկոցից, կը ծածկեմ անապատը կանաչ պատառով, կը լցնեմ անտառը երգով և անուշահոտութեամբ։ Ես կը կերակրեմ ու կը ջրեմ Թռչուններին և գազաններին և կը լցնեմ բնութիւնը զուարճութեամբ։ Թող նրա կանոնները ձեզ համար դիւրին լինեն, Թող նա ամեն մի ամենափոքր խոտի համար, ամեն հազիւ նկատելի միջատի համար նշանակէ մի չջան, որի մէջ հաւատարիմ կը մընան նրանք իրենց բնական նշանակութեանը։ Դուք չէք գաւուել, որովհետև կատարում էք միայն այն՝ ինչ որ ձեզ տուած է ի սկզբանէ աշխարհի Մարդը, մանուկ բնութեան գազանների մէջ, անդադար կռւում է նրա հետ և վերջ չէ տեսնում իր աշխատութեանը։ Նրան անհրաժեշտ են այդ գազանիքները, որովհետև նրանք կազմում են նրա բարեբախտութեան և առաջադիմութեան անխորտելի պայմանը։ Իսկ բնութիւնը ինքը իրենից բաւական է և՝ գրանուածն է նրա առաւելութիւնը։ Վնաս չկայ, որ մարդը քիչ-քիչ մանում է նրա խորքերը—նա նուաճում է միայն հիւղը, իսկ բնութիւնը չարունակում է կանգնել նրա առաջ իւր նախկին անմատչելի զօրութեամբ և ձնշում է մարդուն իւր հզօրութեամբ։ Խաղաղութիւն ձեզ, անասունները և անտառները, գազաններ և Թռչուններ։ Թող տատանեցնեն ձեզ իմ ցարութեան Ճառագայթները»։

Օրհնելով բնութիւնը Տէրը դարձաւ դէպի մարդիկ։ Առաջինը՝ դուրս եկան նրա առաջ սգաւորը, գործի լծով ձրնջուած և ձգաւորութիւնից քամքաղուած մարդիկ։ Եւ երբ Նա ասաց՝ «Խաղաղութիւն ձեզ», նրանք լցրին օդը հեկեկոցով և վազը ընկան երեսների վրայ, լռութեամբ խնդրելով վերկութեան մասին։

Եւ Տիրոջ սիրտը նորից մռայլուեց այն մեծ և մահացու վշտով, որով, Նրա համար պատրաստած բաժակին սպասելիս Գեթսեմանի այգիում մինչև յրծունքները լցուեց նա։ Բոլոր այդ բազմաչարչար խումբը, որը վայր ընկաւ Նրա առաջ, կրում էր կեանքի ծանրութիւնը Նրա անուան համար. նրանք բոլորը առաջինն ականջ դրին Նրա խօսքերին և առ միշտ դրոշմեցին այդ խօսքերը իրենց սրտերում։ Բոլորին Գողգոթայի բարձրութիւններից տեսնում էր Նա, Թէ ինչպէս նրանք, սարկութեան ցանցերով կաշկանդուած, պէս ու դէն էին բնկնում, և կատարելով իւր չարչարանքի Ճանապարհը, Նա օրհնից բոլորին և բոլորին խոստացաւ ազատութիւն։ Եւ նրանք բոլորը այն օրից փոփոխում են Նրան և չտապում են դէպի Նա։ Բոլորն էլ մեծ հաւատով տարածում են ձեռքերը դէպի Նա՝ «Տէր, Դու ես արդեօք»։

—Այո, ես եմ,—ասաց Նա նրանց։—Ես խորտակեցի մահուան կապանքները, որ գամ ձեզ մօտ, իմ հաւատներս, գիւղերն ընկնել։ Մեր Թիֆլիսում, որ Կովկասի կեդրոնն է համարւում ըստ ամենայնի, տարափոխիկ հիւանդութիւնների դէմ կռուելու համար հասարակութիւնը ոչինչ չէ անում և ոչինչ էլ անելու երևի միտք չունի։ Տարափոխիկ հիւանդութիւնները անուշադիր թողած, մանաւանդ մեր քաղաքի պէս անմաքուր և կեղտոտ քաղաքում, կարող է զօրանալ և ահագին վնասներ հասցնել քաղաքիս բնակիչներին։

Երբ վտանգը ընդհանուրին է վերաբերում, ընդհանրութիւնը պէտք է գտնէ այդ վտանգի առաջն առնելու միջոցները և շտապ գործ դնէ։

Ամենից առաջ պէտք է աշխատել վարակիչ հիւանդութիւնների տարածման դէմ միջոցներ գործ դնել և հեռացնել և ոչնչացնել այն ամենը, որ կարող է նրա տարածմանը և զօրանալուն նպաստել։ Դրա համար քաղաքային խորհրդի սեպուհ պարտաւորութիւնն է այս ցրտերին այրելու փայտ բաժանել քաղաքիս ազքատ բնակիչներին, հոգալ բազանիքների վրայ, մինչև անգամ փակել, որովհետև մեր ամենամաքուր տարին ծառաներս, իմ Թանկագին նահատակներս։ Ես միշտ և ամենայն տեղ ձեզ հետ եմ, և ամենայն տեղ, ուր Թափուած է ձեր արիւնը—Թափուած է և իմ արիւնս ձերի հետ։ Դուք մաքուր սրտով հաւատացիք ինձ նրա համար միայն, որ իմ քարոզը իւր մէջ պարունակում է ճշմարտութիւն, առանց որի աշխարհս կործանման տեղ է և վերջին դժոգոհ, Սիրիս Աստուածն և քո ընկերոջը—ինչպէս քեզ՝ ահա այդ է Ճշմարիտը իւր բոլոր պարզութեամբ և բնականութեամբ, և նա առաւելապէս ըմբռնելի է ոչ Թէ աստուածաբաններին և ուսումնականներին, այլ ձեզ, հասարակ և լքեալ սրտերին։ Դուք հաւատում էք այդ Ճշմարտութեանը և սպասում էք նրա գալստեանը։ Ամառը արևի այրող Ճառագայթների տակ, արօրը վարելիս, դուք ծառայում էք նրան (Ճշմարտութեանը), ձմեռը, երկար երեկոներին, ծխոտող ճրագի լոյսով լուսաւորած խրճիթում, անշուք ընթրիքը ուտելիս դուք ձեր մանուկներին նրա մասին էք սովորեցնում. ինքն ըստ ինքեան ինչքան էլ նա կարճ է, բայց ձեզ համար պարունակում է նրա մէջ կեանքի ամբողջ նշանակութիւնը և նորանոր խոստումների համար անսպառելի աղբիւր է։ Այդ Ճշմարտութեան հետ առաւօտը զարթնում էք և նրա հետ քնում և, նրան արտասուքի և հառաչանքների ձևով, որոնք կնդրուկի անուշահոտութիւնից քաղցր են բացում իմ սիրտը, գնում էք իմ սեղանի վրայ։ Պետացէք՝ Թէև ոչ ոք չգիտէ երբ կը գայ ժամը, բայց նա արդէն մօտենում է։ Այդ ցանկալի ժամը կը լռանայ և կը գայ լոյսը, որին

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՐՇԱԿ Բ.

ՀԱՏՈՐ ԺԱ.

Ի ՍԿԶԲԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՐԹԵՒԱՑ

Ի ՍԿԶԲԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՐԹԵՒԱՑ

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԱՐՇԱԿ Բ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա. Ղազարեան.

Ա. Ղազարեան.

Ա. Ղազարեան.

Այսպէս կոմս Լօրու-Մելիքեանի մասին խօսում են աւելի նշանաւոր Թիֆլիսեցիք։

Պարզ է մի բան, որ Լօրու-Մելիքեանի կօրուստը խիստ զգալի է Ռուսիայի հասկացող հասարակութեան համար։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ներքին գործերի մինիստրութեան տրուած բարձրագոյն հրամանով Թիֆլիսի փոխ-նահանգապետ, կամերհէր, պետական խորհրդական Շերվաշիձէն նշանակուած է Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար. իսկ Թիֆլիսի նահանգական գատարանի դատախազ, իսկական պետական խորհրդական Զայկովսկին—Թիֆլիսի փոխ-նահանգապետ, երկուսն էլ սոյն դեկտեմբերի 8-ից։

—

Դեկտ. 23-ին, ուրբաթ օրը չ'սատցանք Ռուսիայից եկող պօսաը։

—

ԳԱՆԶԱԿԻՑ։—Այստեղից 35 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Անենկֆէլդ գերմանական կօլօնիայում դեկտ. 16-ին գպրոցը այրուեցաւ, մի աշակերտ էլ հրդեհից սատցած վէրքերից վախճանեցաւ։

—

«Նոր-Դար»-ի նախընթաց 216 համարի քրոնիկոնի տակ հրատարակեցինք մեզ ուղղած մի նամակ՝ այլոի Ք. Տէր-Բաբսեղեանց սատրագրութեամբ։ Այդի հայ կնոջ նամակից երեսցանք, որ քաղաքիս մի հին, յայտնի հայ օջախի օրդի՝ անսպառ պաշտօնագործի լինելով և տպրուստի ուրիշ մինոց չունենալով, շատ մեծ նեղութեան մէջ է այժմս. ունի նա չորս մատղաշ զաւակ, երիտասարդ կնին, բայց չունի գործ կերակրելու միջոց։ Այդի տիկին Ք. Տէր-Բաբսեղեանցը խնդրում է մեզանից, որ մենք յորդոր կարդանք, և բարի մարդկանց հրաւիրենք օգնութեան ձեռք մեկնելու այդ ընտանիքին։ Երեքիս խմբագրից գաղտնիք չէ այդ ընտանիքի անունը. այդ յայտնի է նրան, ինչ հարկ կայ յորդոր կարդալու։ Մէրթ օգնութեան կարօտը նա է, որ փող չունի, որ տղքատ մեծացել է և ամենքին յայտնի է այդ, մէրթ Թըշուառը նա է, որ ապրելու միջոց չունի, բայց կարող է խնդրել, մուրալ, ոչ, կայ օգնութեան աւելի կարօտը, աւելի Թշուառը—նա՝ որ հարուստ մեծացել է և յանկարծ Թշուառութեան մէջ է ընկել, նա՝ որ ապրելու միջոց զրկուել է, բայց ամաչում է ուրիշին յայտնելու այդ, նա՝ որ զառնացած սրտով տեսնում է իւր կինը նեղութեան մէջ, իւր զաւակները քաղցած, բայց մուրալ կարող չէ... այդպիսի ընտանիքն է կարօտ օգնութեան, գրան պէտք է ձեռք մեկնել։ Այդ գործը՝ քրիստոնէութիւն է, Աստուածահաճոյ գործ է։

—

Խմբագրութիւնս ստացաւ 5 րուբլի տիկին Կատարինէ Օհանջանեանից յանձնելու այլի Ք. Տէր-Բաբսեղեանին, որպէս զի այս վերջինս տայ այդ գումարը կարօտ յայտնի բնտանիքին։

—

ՀՈՌՈՄԻՑ։—Աւէքսանդրապօլից դէպի արևելա-հարաւ՝ 15 վերստ հեռաւորութեամբ գտնուում է Հոռոմ գիւղը։ Հոռոմի արևելեան կողմում՝ Ղալաչի կոչուած լեռների վրայ կան բերդի հին աւերակները, որոնք երբեմն վրայ արձանագրութիւն չունենալու պատճառով, ոչոյց չեն տալիս, թէ ինչ ժամանակուայ մնացորդներ են։ 1881 Յունից սկսած մինչև այսօր Հոռոմի ժողովրդին հալ ու մալ արեց և վերջին սնանկութեան հասցրից «առանձ-աչքի» բնարութեան գործը, բայց վերջին օրերս Թէ Հոռոմում և Թէ նրան շրջապատող մի քանի գիւղերում, որոնք Հոռոմի հետ միանալով մի գիւղական վարչութիւն են կազմում, չնորհիւ նոընտիր տանուտէր պ. Աւագ Ամոյեանի, մի անսովոր կենդանութիւն է նկատուում։ Շնորհակալութեան արժանի է այստեղի պրիստաւ վ. արդ. պատրիկեանը, որ ամեն մի միջոց գործ է դնում գիւղիս նահապետական ձևով շինուած փողոցներին փոքր ի շատէ կանոնաւոր կերպարանք տալու. աշխատում է նաև գիւղիս Ծնական միդասեան դպրոցի կանոնաւորութեան համար։

Ջնայիւով, որ մեր դպրոցը-2500 րուբլու չափ պատրաստի գումար ունի նորընդրը հոգաբարձութեանը պահ տրուած, բայց այնու ամենայնիւ մի կանոնաւ ուղղութիւն չունի, որ չջնակայ գիւղերի ուշադրութիւնն գրաւէ. հոգաբարձուները միայն այն են մտածում, որ փողը ամենևին չծախսուի, որպէս զի երեսնց յաջորդներին կարօտ չանձնել այնքան՝ որքան իրենց նախորդներից ստացել են։

—

Մայրաքաղաքի Թերթերի ասելով, Գերմանիայի և Ռուսիայի մէջ, Գերմանիայի առաջարկութեամբ, բանակցութիւնները են սկսուած գրականական պայմանագրութեան համար։

—

Անցեալ անգամ հաղորդել էինք, որ Թիֆլիսի քաղ. խորհուրդը որոշեց ի միջի այլոց ցաւակցութիւն յայտնել Հանգուցեալ կոմս Լօրու-Մելիքեանի ընտանիքին և ցանկութիւն՝ հանգուցեալի մարմինը Թիֆլիսում հողին յանձնելու։ Քաղաքագլխի պաշտօնակատար պ. Պ. Իգմայելեանը հետևեալ հեռագիրն է ուղարկել հանգուցեալի ընտանիքին։

«Թիֆլիսի քաղ. խորհուրդը իւր նիստում, որը փակուեց ի նշան խոր վշտի, միաձայն ինձ յանձնարարեց իւր հռչակաւոր անդամի և համաքաղաքացու ընտանիքին յայտնելու նրա ծննդեան քաղաքն բոլոր բնակիչների անկեղծ վշտի զգացումները։ Թիֆլիսի ժողովրդի միաձայն ցանկութեան համաձայն, քաղ. խորհուրդս խնդրում է հարազատ երկիրը չը զրկել իւր մեծ, փառաւոր և ամենասիրելի որդու աճիւնները յետնորդների համար պահպանելու մեծ պատուից։ Իսկ ինչ վերաբերում է իմ անձնական վշտին, բոլոր նրա անհունութիւնն, կոմսուհի, յայտնի է ձեզ»։

—

ՇԱՄԱԽՈՒՑ տան և ուժը վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Ղոզլուչայ գիւղում «վկայաբեր» օր ըստ «իշ սատկանալով առատ հունձ ունի. մինչև հաշուով, «րը՝ 3—4 երեխայ այդ հիւանդութեան զոհ են գըտնում, իրենք գիւղացիները ոչինչ չեն անում այդ հիւանդութեան դէմ։ Անցեալ օրը եկել էր այդ գիւղը Քիւրդամիրի հիւանդանոցի աւագ ֆերշէլը, բայց դա էլ ոչինչ չկարողացաւ անել, որովհետև ինքն էլ հիւանդացաւ և երեք օրից վերադարձաւ Քիւրդամիր։

Հիւանդութիւնը գնալով սաստկանում է. ով պետի օգնէ անօգնական գիւղին։ Գիւղի բնակիչները մալականները են և շատ աշխատաւոր, ամառը պարապում են ցանքսերով, ձմեռը սայլապանութեամբ։ Հոդը արգաւանդ է, տեղը գեղեցիկ. այդ գիւղն այ իւրը յայտնի է Շամախուայ։

—

Նշանաւոր իրաւագէտ, երեմեան պրօֆէսսոր Մոսկուայի համալսարանի—Մ. Կաւալևսկին, այս ամառ Ճանապարհորդելով Դաղստանում իրաւաբանական սովորութիւնները հաւաքելու նպատակով, իւր մի յօդուածի մէջ *) զանազան փաստերի հիման վրայ, գալիս է այն եզրակացութեան, որ հին ժամանակներում անշուշտ Դաղստանում եղել են քրիստոնէական տաճարներ։ Ի մէջի այլոց գիտնականը Գունիբի շրջակայքում գտել է մի պղնձէ աշտանակ, որի վրայ հայերէն առաւիրով գրած է. «Ընծայեցի յիշատակ վանձանեալ Մարիամի, կընոջ Թեփանոսի, վատկի Թոռան, Իգուն Սօգրատայ Մուխոյիսկի սուրբ կամոմկըին 1245.» Այս իրը կատարեալ սկիզբն ընծայել է Մոսկվայի պատմական Թանգարանին։ Մի այլ տեղ, այն է՝ կազի-Կումուխի մզկիթում, որ հիմնել է, ըստ աւանդութեան, Արսէմուսլիմը, Ճանապարհորդին ցոյց են տուել մի սքանչելի գաւազան, որը գիտնականը նմանեցրել է Հայոց հայկազունների գործածած գաւազաններին. կազին (մահմեդ. հոգ.) այդ գաւազանը բանեցնում է Հանգիստառը զէպքերում։ Մահմեդականների աւանդութիւնն ասում է, որ այդ գաւազանը պատկանում է եղել այն հոգևորականութեան պետին, որը նախ քան կազի-Կումուխում, Արսէմուսլիմի միջոցով մահմեդականութիւն տարածուելը, տիրող է եղել այդտեղ։

—

Թագաւոր Կայսրը, ներքին գործերի մինիստրի ամենահլատակօրէն մատուցած զեկուցման հիման վրայ, սոյն դեկտեմբերի 8-ին ամենողորմածաբար Թոյլ է տուել բոլոր Ռուսական պետութեան մէջ ստորագրութիւն բանալ Պրժեվալսկու անունով ուսուցաց Կայսերական աշխարհագրական ընկերութեան մէջ մեդալ կամ մըցանակ նշանակելու համար։

—

Թիֆլիսում տիրող սաստիկ ցրտերի պատճառով, չքաւոր ընտանիքները մեծ նեղութիւնների մէջ ընկան, մանաւանդ որ վառելիքն էլ թանկացաւ։ Հանապարհները փակուելու պատճառով, ցուրտը աւելի զգալի է մանաւանդ չքաւոր աշակերտների համար։ Այդ պատճառով Թիֆլիսի I գիմնազիոնի չքաւոր աշակերտներին նպաստող ընկերութեան կարգագրիչ յանձնաժողովը մանկավարժական խորհրդին յանձնել է 200 րուբ. փող՝ չքաւոր աշակերտներին բաժանելու համար։

—

Զինուորա-բժշկական վարչութիւնը, «Нов. Вр.»-ի ասելով, վերջնականապէս վճռել է գործածութեան մէջ մտցնել դեզատնային տասնորդական կշիռ։

—

Բագուի նահանգի, Լէնքորանի գաւառի գաւառապետ շտաբս-կապիտան Գօնճաչէնկը նշանակուած է Թիֆլիսի նահանգի, Թիօնէթի գաւառի գաւառապետ, իսկ Թիօնէթի գաւառապետ եղ. Զանգիեզին նշանակուած է Թիֆլիսի գաւառի գաւառապետ, իսկ Թիֆլիսի գաւառի ժամանակաւոր կառավարիչ Ստարոսելիսկին նշանակուած է Լէնքորանի ժամանակաւոր կառավարիչ։

—

Ներկայումս Թիֆլիսումն է գտնուում Ղարսի պինոտրական նահանգապետ գնեռալ-մայոր Պ. Ի. Տօմինչը, որ Տաւատական գործերի համար է եկել և մի քանի շաբաթ կը մնայ այստեղ։

—

Ախալցխայում մօտերքս, Բագուի նահանգական դատարանի ժամանակաւոր քաժնում քննուել է սպասկատակ Հաջի-Միրզա-Հուսէյնի-Միրզա-Շաֆի օղլու և բագուեցի նագիս-Ղուրբան-օղլու գործը, որոնք միզապրեում են՝ առաջինը ռուսական և պարսկական փողեր կտրելուն և երկրորդը նրա համար նիւթ և մեքենաները մատակարարելուն համար։ Պատարանը, ինչպէս հաղորդում են «Кав»-ին, դատապարտել է առաջինին 8 տարուայ, իսկ միւսին վեց տարուայ տաժանակիր աշխատանքի։

—

ՇԱՄԱԽՈՒՑ։—Մեր քաղաքը շատ վատ դրութեան մէջ է գտնւում ներկայումս, առաջինը առևտուր չլինելու և երկրորդը Թանկութեան ու սաստիկ ցրտերը պատճառով։ Հայերն էլի քիչ ու շատ կարողանում են դիմադրել այդ դառը դրութեանը, բայց մեր հարևան Թուրքերը չեն կարողանում դիմանալ. նրանց մեծ մասն այն աստիճան չքաւոր է, որ օրուայ ուտելու հացի էլ կարօտ է—փողոցի փողոց ընկած մուրացկանութիւն է անում։ Շամախու մէջ, կարելի է ասել, որ երեք մասը այդ չքաւոր դասակարգից են։ Սաստիկ ձմեռ է, ուտելու հաց չունեն, վառելու փայտ ու ածուխ չկայ, ուստի նրանք կամ մուրանում են և կամ գնում մեծ տոկոսով փող վերցնում, տանջլն իրեր գրաւ դնում չնչին փոխառութեամբ։

—

Սրանից մի քանի տարի առաջ Թերթիս խմբագիրը առաջարկեց պօստային վարչութեան, որ տեղական Թերթերի պօստով ստացող բաժանորդագրութեան համար առանձին գիրք լինի, որպէս զի հասարակութեան համար նշանակուած գրքին խմբագրութեան կողմից պօստ գնացողները երկար ժամանակ չսպասեն՝ երբեմն հատանելի փողով նամակները ստանալու համար։ Ահա քանի տարի է, որ պօստային վարչութիւնը դեկտեմբերը և յունվար ամիսներին խմբագրութիւնների համար առանձին գիրք է նշանակում և այդպիսով անչափ դիւրացնում է Թերթերի գործը։ Այս հանգամանքը ի նկատի առնելով, խմբագրութիւնս խնդրում է, որ այս վերջին ամիսներում խմբագրութեանս ուղարկուած գումարները խմբագրութեան հասցէով ուղարկուն և ոչ խմբագրի անունով։ Այս վերջին դէպքում, նամակները նշանակւում են ընդհանուր գրքում և մեր գործը դժուարացնում։

—

ՎԵՐԻՆ-ԱԴՈՒԼԻՍԻՑ։—Դեկտ. 12-ին տեղիս ս. Մինաս եկեղեցու օլտարը լինելով, եկեղեցին լիքն էր ժողովրդով։ Սուրբ պատարագի միջոցին կարդացուեց Նորին Կայսերական Մեծութեան իւր ամբողջ Օգոստափառ Գերդաստանով հրաշքով ազատուելու առիթով գրած Հրովարտակը, իսկ սուրբ պատարագից յետոյ՝ հանդիսաւոր կերպով գոհաբանական մաղթանք կատարուեցաւ, միանգամայն և խնդրուածք Նորին Կայսերական Մեծութեան Թանկագին կեանքը այսուհետև ևս անփորձ պահպանելու համար։

—

Սոյն 1888 Թուի հոկտեմբերի 6-ին Բարձրագոյն հաստատուած է առաջնկայ 1889 Թ. յունվարի 1-ից հետևակ զօրքի սրտատօրչեկների հիմնական ռոճիկը 100 րուբլուց դարձնել 240 ր., իսկ արտակարգ 150 ր. դարձնել 360 րուբլի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՄԵՐԻԿԱ.—Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Կլիվլէնդը կոնգրէսին ուղարկել է մի մանիֆէստ, որ խիստ մեծ նշանակութիւն ունի և որով նա դիմում է ժողովրդին։ Այդ առթիւ Նիւ-Եօրկից գրում են «Magdeburger Zeitung»-ին. «Երբէք սօցիալական խնդրի հետաքրքրութիւն այնքան զօրեղ չէր բացատրուած վարչական բարձրաստիճան անձի կողմից։ Կլիվլէնդը հասարակապետութեան անուանի և իրաւունք ունեցող անձերին այնպիսի խիստ խօսքերով է դիմում, որ մարդիս ակամայ յիշեցնում է Մարտին Լիւտերին։ Նա ցոյց է տալիս, առանց այլևայլութեան, որ ներկայ քաղաքական և սօցիալական պայմանները բոլորովին տարբեր են ամերիկական ազատ կառավարութեան մարդասիրական գաղափարներից։ Նա հարուածում է մենաւաճառների և գործարանատէրերի անկշտում ագահութիւնն և անիշխանական բռնակալութիւնը, մատնացոյց է անում ծայրայեղ և հակասահմանադրական գուարձութիւնների և վատնումների վրայ, որոնք առաջ են գալիս վատ, անտահմանադրական օրինակութեամբ (պահպանողական տուրքեր)։ Ժողովրդի չքաւոր մասերի հաշուով անհատներին հարստացնելով, այդպիսի օրէնսդրութիւնը Միացեալ-Նահանգների հասարակապետական կազմի մէջ մտցնում է Թուանաւոր, տարբերուծող տարր։ Կլիվլէնդը խիստ պատասխանում է այն ամօթալի միջոցները, որոնց միջոցով հարստացած վաշխառուները ագռում են օրէնսդրական ժողովի և բնտրութիւնների վրայ։ Այս մանիֆէստը կոնգրէսի վրայ խիստ մեծ տպաւորութիւն գործեց։ Նահանգապարներն, բնտրութիւնների միջոցին երեսց կրած պարտութիւնից յետոյ, հաւաքուելան վաշինգտոնում քաւական ճնշուած տպաւորութեան տակ։ Այդ ժամանակ դեռ պարզուած չէր, որ, չնայելով Ինդիանայում և Նիւ-Եօրկում բնտրութիւնների միջոցին գործադրուած ապերախտութիւններին, Կլիվլէնդը երկու հարիւր հազար ձայն աւելի ըստացաւ քան Թէ Հարրիսոնը, որ այդպէս լոկ փոքրամասնութեան նախագահն է գտնուում։ Բայց եթէ Հարրիսոնն այժմ, բայց և այնպէս, Միացեալ-Նահանգների նախագահ է ընտրուած, գա միմիայն առանձին նահանգներով քնտրութեան չնորհիւ։ Այն քաղութիւնը, որ երևում է Կլիվլէնդի մանիֆէստի հղանակի մէջ, պատգամաւորների վրայ Թարմացուցիչ ազդեցութիւն գործեց։ Երբ կարդացուեց Կլիվլէնդի մանիֆէստի այն մասը, Թէ մաքսային գների մասին ոչ մի համաձայնութիւն չպէտք է կայացնել, մի այնպիսի երևոյթ առաջացաւ, որպիսին չէ պատահել։ Ռամկավարները, երեսց մեծ պարագլուխ Ճարտարախօսութեամբ, վերկացան տեղերից և ահագին ցոյցեր արեցին նրան։ Անհրաժեշտ է նկատել, որ նայելով այդ մանիֆէստին, Կլիվլէնդն ամենևին մտադիր չէ հասարակական կեանքից հեռանալու։ Ընդհակառակն, կարելի է եզրակացնել, որ ամիսալսարական կուսակցութիւնը, ինչպէս առաջ, նրան համարում է իրեն պատգամաւոր։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Մարդիզից ստացուած տեղեկութիւնների նայելով, տեղական գանձարանից անյայտ չարագործները յափշտակել են 1,250,000 Ֆրանկ փող, որ երկու երկաթեայ սնդուկների մէջ է պահուելիս եղել։

*** Ամերիկական մի լիճ Անգլիս կարնէժին մտագիր է Նիւ-Եօրկում հիմնելու մի կոնսէրվատօրիա, որի համար նուիրել է երկու միլիոն դօլար։

***

Շէյխների պարագլուխ Փրանսիացին.—Մահդիի ամենահզօր զո-

րականը Օսման-Փիգման է։ Այդ մարդը ապգով Ֆրանսիացի է, անունը Ժօրժ Բինպէ և կրթուել է Պարիզում։ Նա 13 տարեկան մեջոցին գրկուում է հօրից, իսկ մայրը Ամէքսանդրիայում ամուսնանում է մի արաբ վաճառականի հետ, որի անունը լինում է Օսման-Փիգմա։ Ժօրժն ընդունում է մահմեդականութիւն իր հօր ցանկութեամբ և մանում է Գահնբէի պետուրական ուսումնարանը։ Օսման-Փիգմա հայրը մնում է 1865 թ. Սուաքիմում։ Երբ 1882 թուին Ագաթի-փաշան ապստամբեցաւ, Օսման-Փիգմա-Ժօրժը երեն Էսբերից այդ գործին և միասին իր ուսումնարան նական ընկերը Ագաթի-փաշայի հետ, իսկ Սուդանի չէյխերը նրան ընծայեն իրենց պարագլուխ։ Նա մի պատերազմի մէջ գրկուեց իր ձախ ձեռքից. նա բարձրահասակ է, ազդու կերպարանքով, սև և վառվռուն աչքերով և սև ու խիտ երկար մօրուքով։ Նա միայն երեք կին ունի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի.— Հրատարակուած է առաջիկայ տարուայ սեպտեմբերի մեկից հինգ կազրային բեռնակիր բաստալիօն կազմելու մասին և բեռնակիր բաստալիօնի կանոնագրութիւնը։

ԲԵԼԳՐԱԴ.—Երեկ մեծ սիրալիրութեամբ փակուեց Թագաւորի ճառով, որ յայտարարեց, թէ Սերբիայի համար նոր դար է սկսւում, յետոյ Թագաւորը ստորագրեց նոր օրէնքը։

ՀՈՆ-ԿՈՆԳ.— «Վխտագ» կօրվետի (նաւ) հրամանատարն ու սպաները իրենց բարեկամներին և ծանօթներին շնորհաւորում են տօները։ Բոլորն առողջ են։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Բաթում, պ. Մ.-ին.— Համաձայն ձեր գրութեան, առաջիկայ 1889-ին կուզարկուի մի օրինակ «Նոր-Դար» պ. ե. Մ.-ին, Ո՛վ պէտք է վճարէ և ինչ այդ օրինակի վճարը, այդ մասին ոչինչ չէք գրում։

—

Ալաւկա, Աբևին.—Ձեր նամակները հէն վէրջերը բանալու քնաւորութիւն և ձգտումն ունին, այն ինչ «Նոր-Դար»-ը այդ բանին դէմ է և դէմ պէտք է լինի։ Ինչ որ դուք առաջարկում էք, ինքներդ գիտէք, որ ընդունելութիւն չպիտի գտնուի, ուրեմն ինչ է ձեր միտքը։

Այդ տեսակ գրութիւններ չեն հրատարակուիլ։

—

Վ ա ղ ա ր շ ա պ ա տ, պ. ե. Գ.-ին.— Ձգմարիտ է, մի քանի ամիս առաջ ստացե ենք Նոր-Նախիջևանից «Մեռնողը» ինքնուրոյն պատկերը։ Այժմ ստացանք ձեր նամակի հետ միասին երկու ինքնուրոյն պատկերներ՝ «Ցուսահատը» և «Թշուառը»։

—

Ա Թ է ն ք, պ. Հ.-ին.— Ստացանք ձեր նամակը. յատուկ և սրտանց շնորհակալութիւն, որ մեզ համար անգին յանձնարարութիւնը այդքան սիրով կատարել էք։ «Տեսնել նրան և չը ոգևորուիլ, անհնար է, գրում էք դուք, վեհութիւնը, ասում էք, փայլում է նրա դէմքի վրայ»։ Կրկին շնորհակալութիւն, բայց իմացէք, որ ձեզ նախանձեցինք։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՆՈՑՇԱՀՈՑ ԻՒՂԻՐ

№ 4711

ՆԱՐԳԻԶ

3 բուք., 2 բ. և 1 բ. 50 կ. սրուակը. իւր գեղեցիկ առատ հոտի պատճառով նոյնպէս չուտով կ'արժանանայ կանանց ուշադրութեանը, ինչպէս և այնքան ընդունուած

№ 4711

ՊՈՒՏ

ԳՈՒԼԽՆԵՐԸ

կանաչ-ոսկեգոյն գոյնզանգուած. 3 բ., 2 բ. 40 կ., 1 բ. 60 կ. և 1 բ. սրուակը.

№ 4711

VIOLETTES DE PARME

2 բ. 40 կ., 1 բ. 60 կ. և 1 բ. 25 կ. սրուակը, որ իւր նուրբ հոտով գերազանցում է բոլոր այլ դոյնիները։

Գնելիս ուշ դարձրէք

№ 4711

(Կառավարութենից հաստատած) գործարանի մարկայի վրայ, որը գտնուում է ամեն մի գոյնզանգուի վրայ իբրև ապրանքի նշան։

Գտնուում են Ռուսիայի բոլոր անուշարոյր նիւթերի և դեղատնային մեծ մագազիններում։

(Մ.) 3—3

ԻՍԿԱԿԱՆ Է ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՑՍ ՆԻՇՈՎ ՄԻԱՑՆ

Huste-Nicht

Gerichtl. Geschützt

ՄԻ՛ ՀԱՑԱԻԻՐ

Մեղրա-Քուսեղէն-Մայլց-Էկստրակտ և շաքարեղէններ. *)

Լ. Գ. ՊԻՏՇ և ԸՆԿ. ԲՐՅՍԱՆՈՒՄ.

Ծառ է ածուում հազի, խռնիլ, կերկեման, կոկորդի և կզգայարանի դէմ։

ԳՈՐԾԱՏՈՒԹՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

Փակ. Մխիթարեանց) med. pract.) Լաբեհանելի համար նշանակել է 3—4 անգամ օրեկան 1 թէյի գդալով հիւանդակից։

Շաքարեղէնները հազի, հիւկերկեման և կոկորդի մրսածութեան առաջն առնում են։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով հաստատած է, որ յամենայն դէպս այս բաղադրութեան մէջ չեն մտնում տարօրինակ նիւթեր և ուսեալ բժիշկը ոչնչ վնասակար նիւթեր և ուսեալ բժիշկը ոչնչ վնասակար նիւթեր չի գտնիլ։ Ուստի բժիշկը և վաճառելը թոյլատրուած է բժշկական դեպարտամենտից։

*) Գինն է—մի շիշը 1 բ. 25 կ. և 2 բ. 40 կ., շաքարեղէնները 30 և 50 կոպ.

Գլխաւոր պահեստն է Ռուսիայի համար—Վ. Ռուբինի մօտ Պետերբուրգում։

Վաճառւում է Ռուսիայի բոլոր դեղավաճառանոցներում և դեղատներում։

Թիֆլիսում վաճառւում է դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան, Վ. Րուբինշտեյն, Գ. Ա. Պոպովի, Մ. Մարտիրոսովի և Ա. Պոպովի մօտ։

(Մ.) 17—5

Լոյս տեսաւ և վաճառւում է Թիֆլիսի յայտնի գրավաճառանոցներում

„ԱՇԽԱՐՀԻ ՀԷՔԻԱԹԸ“

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոր երգերի յաւելուածով, աշխատ. ԱՇՂԱՐ-ՋԻՒԱՆԻՆԻ։

Գինն է 45 կոպ., գումարով գնողներին զիջումն կը լինի։

3—3

ԴՕԿՏՕՐ ԺԵՐԱՐԻ ԵՐԿԱԹ

ՌՈՒՍԻԱՑՈՒՄ ԹՈՅԼԱՏՐԱԾ

Այս երկաթեայ դարմանն թեթեւակի լուծողական լինելու առաւելութիւնն ունի. Պարիզի բժշկական ճեմարանի հաշիւը ցոյց է տալիս, որ նա աշխարհութեամբ գործ է դրւում չէնշոլինեան, պրեան նատրոլինեան կամ անգիմայի դէմ։

Դեպօն գտնվում է Պարիզում, 8, rue Vivienne, և Ռուսիայի նշանաւոր դեղատներում։ 26—13

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԱՅԻ“

Գ. ՏԱՐԻ, 1889։

ՀԱՆԴԷՍԸ կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը եւ կը բովանդակէ՝

1. Հէն եւ նոր Հայ գրականութիւն, պատմութիւն եւ այլն վերաքերեալ ազգային ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ընդարձակ յօդուածներ, եւրոպացի հեղինակաց հայ ազգին վրայ գրած նոր յօդուածոց և գրոց թարգմանութիւններ, գիտնական հատուածներ եւ այլն։

2. ԱՐՈՒԵՍՏԻՏԱԿԱՆ յօդուածներ։

3. ԲԱՐՈՑԱԿԱՆ վէպեր ու հատուածներ։

4. ԱԶԼԵԻԱԶԼՔ, այն է՝ գիտնական աշխարհի նորահոր գիւտեր, գիտնական եւ անտեսական նորագոյն մանր տեղեկութիւններ եւ այլն։

5. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ամսոյ մը մէջոցին եւրոպական քաղաքականութեան առած գրից համառօտ տեսութիւն։

Հանդիսի այս Գ. Տարին ունի ՀՈԼԱԳՈՅՆ պիտի ըլլայ քան նախընթաց տարիներն, նոր եւ հետաքրքրական յօդուածներով, յատկուածներով, ժամանակակից նշանաւոր անձնաւորութեանց պատկերներով, եւ այլն։

=Յատկուածներու յաճախութիւնը բաժանորդաց չատութենէն կախում ունի։=

Բաժանորդութեան գինն է՝ Ամբոլ Ծախքով՝ տարեկան 8 Փր. = 4 բբ. = 4 Փիլ.։

Խմբագրութեան հասցէն է՝ Rédaction de la Revue «Hantess» , Vienne (Autriche), VII. Mechitharistengasse 4, եւ կամ՝ Въ Вѣну (Австрія), Редакція «Андесъ», Wien, VII. Mechitharistengasse 4.

Այս տարի ալ վիճակաւ այլեւայլ գրքեր պիտի տրուի բաժանորդաց, որուն վրայ տես Հանդիսի 1889 Թիւ 1.

Խմբագրութիւնս որոշած է Հանդիսի Գ. Տարւոյն շրջանէն ատեն ատեն օրինակ նուէրել ազգային կարեւոր վարժարանաց՝ վիճակահանութեամբ։ Այն վարժարանք՝ որ կը բաղձան մասնակցիլ վիճակահանութեան, ասկէ են՝ վարժարանին վարչութեան կնքովն վաւերացեալ թղթագիր մատուցանել խմբագրութեանս։ Թղթագիրք փութով հասնելու են խմբագրութեան ձեռքն։

1889 տարւոյ Հանդիսի Յունուար 1 Թիւն ուղղակի խմբագրութենէս կրնայ ընդունուիլ ձրի՝ ուղարկելով 5 սանդ. = 10 փր. = 2 կոպ. նամակագրոշմ։

—Ռուսահայք կարող են բաժանորդ գրուիլ Թիֆլիսում պ. Յովակիմ Զաքարեանի մօտ, պ. Մուրմանեանի գրատնեակում։

(Խ.) 3—2 ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ “ՀԱՆԴԻՍԻ„

VERITABLE BÉNÉDICTINE

ԻՍԿԱԿԱՆ ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԼԻԿԵՈՐ

Ֆրանսիայում Fécamp-ի արքայազնութեան գերազանց, հարդուրիչ, մարսողութիւնը օգնող և ախորժակ զարթեցնող

ԲՈԼՈՐ ԼԻԿԵՈՐՆԵՐԻՑ ԱՄԵՆԱԼԱՒԸ.

VÉRITABLE LIQUEUR BÉNÉDICTINE
Marques déposées en France et à l'Etranger
A. Legrand aîné

Ամեն անգամ պահանջել քառանկիւնի Թղթանիշը չիշն ներքեւում՝ գլխաւոր տեսչի ստորագրութեամբ։ Իսկական Բենեդիկտեան (Bénédictine) լիկեորը գտնուում է բոլոր քաղաքներում՝ մթերքների, մրգեղէնի, գինու և այլն ամենայայտ վաճառատոներում։ (Մ.) 18—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ԵՐԱԽԱՅՐԻՔ“

Հրատարակութեան վերջին՝ Չորրորդ Գիրքը—Ձմեռը. գինն 50 կոպէկ է։ Վաճառւում է Թիֆլիսի «Կեդրոնական», «Կովկասեան» և միւս բոլոր գրավաճառանոցներում։ Յանկացողները նոյն տեղերում և հետիոնակից կարող են ստանալ «ԵՐԱԽԱՅՐԻՔ» Աշուջն, Երկրորդ, Երրորդ (Գարուն, Ամառ, Աշուն) գրքերը, որոնց իւրաքանչիւրի գինը նոյնպէս 50 կոպէկ է։

Իմ Հասցէն. Шулаверы (Черезъ Бѣлый Ключъ) Аршаку Мелъабяну.

(ա.) 5—2 Արշակ Մեհրաբեան

ԴԵՊՕ

Կ. Մ. ԾՐԵԳԷՐԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՏԱՆ

ՐՕԲԱՆԵՐ ԵՒ ՓՈՇՆԱԿՆԵՐ

ԾԱԽՈՒ ԵՒ ՎԱՐՁՈՎ

Ընդունում են բերել տալ երաշխաւորութեամբ պրոպոցիա—ընկերութիւնների պարբերների համար.

Գօլովինսկի պրօսպեկտ, տուն № 8.

(2բ. 2) 50—2

ԳՕԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱՑ

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ

ՆՈՐ ԲԱՑ ՈՐԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Մերբլիանեանի տանը, Նահանգական պոպոյանի դէմ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ստացուած է արտասահմանեան և ռուսական նոր՝ տղամարդկերանց և տղաների հագուստ։

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՈՒԱՑ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Գօլովինսկի պրօսպեկտի վրայ, Մերզոյեանի տանը (նախկին Բելլուի)

ՄԱԳԱԶԻՆԸ ՓԱԿՈՒԻԼՈՒ ԱՌԹԻՒ

Վերջնական էֆան վաճառք է նշանակած

ՄԵԾ ԶԻՋՈՒՄՈՎ

Մինչև դեկտեմբերի 24-ը, այնտեղ մնացած ապրանքի։

19—17

«ԱՐԱՔՍ» ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑՈՒԱԾ Է։

Մինչև փետրուարի 15-ը «Արաքսի» երկու գրքերի գինն է 3 րուբլի, իսկ այնուհետև ստորագրուողների համար՝ 5 րուբլի։

«Արաքսի« առաջին գիրքը կ'հրատարակուի փետրուարի վերջին. նրա մէջ կ'մտնեն ի միջի այլոց հատուածներ Ռեշտունիներ, Պեշտրուկեաններ, մասնաւորապէս Կիլիկիոյ վրայ (Մարաշ, Զէյթուն, Հաջին հանդերձ տեղական ատանգութիւններով)։ Մատենագրական. Նորավէպ Պօլսի կեանքից, նորավէպ Տուրգենեվից, բանաստեղծութիւններ։ Կենսագրութիւններ Պօլսի ս. Պատրիարքի, Փրնուզի Նիկողոս եպիսկոպոսի (Զէյթունի հերոսի)։ Կարապետ Վարդապետ Եահնազարեանցի, Բերովբէ Պատկանեանցի, Գ. Սունդուկեանցի, վառօդապետ Տադեանի, Արտուքեան-Երկայնաբազուկի։ Մատենախօսական (ընդարձակ) գիտական գրուածքներ. տաճկահայերի ընդհանուր գործերի տեսութիւնը, հասարակական և գրականական, և այլն։ Եւ որոնց հետ ունենալ էջերին գեղեցիկ պատկերներ և պատառներ։

Անցեալ տարուայ գրքերի գինն է այժմ 8 րուբլի։

Մեզ դիմելու են այսպէս. Петербургъ, Симеону Гуламирянцу.

Սիմէօն Գուլամիրեանց

2—2

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го Декабря 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրատնեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова